Դպրաբակ

Բնակչության թիվը՝ 593

Դպրաբակ բնակավայրը տեղակայված է Գետիկ գետի ստորին հոսանքի ձախ կողմում, մարզկենտրոնից 100 կմ հեռավորությամբ։ Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1240 մ բարձրության վրա։ Նախկինում անվանում էին Չայքենդ, վերանվանվել է Դպրաբակ՝ 03.04.1991թ։ Հիմնադրվել է 1778 թվականին։ 1988 թ վերաբնակեցվել է Ադրբեջանական ՍՍՀ Շամխորի շրջանի հայաբնակ գյուղերի փախստականներով։ Դպրաբակ տանող ճանապարհից դեպի աջ կա 19- րդ դարի կամուրջ։ Գյուղից 4 կմ հվ-արմ,անտառի մեջ՝ Այրիջուր կոչված հանդամասում, կան գյուղատեղի, խաչարձան, խաչքարեր՝ 12-13- րդ դարերի արձանագրություններով։ Գյուղն ունի կիսավեր եկեղեցի՝ 17-18 - րդ դարերում թվագրվող։ Ունի միջնակարգ դպրոց։ Բնակչությունը զբաղվում է գյուղատնտեսությամբ։